

ՀԱՅՅԵՐԻ ՄՈՂԱՎԻԻԱ ԵՎ ԲԵՍԱՐԱԲԻԱ ԴԱՂԹԵԼՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հինավուրց Մոլդավիան՝ այն երկրներից մեկն էր, որ միջնադարում բնակություն էին հաստատել հայ պանդուխտների հոծ բաղադրությունները: Հայտնի է, որ արտագաղթը դեպի Մոլդավիա տեղի է ունեցել հիմնականում XIV—XV դարերում, թեև հետագայում էլ այն շարունակվել է: Մոլդավիա և Բեսարաբիա հայերի գաղթելու պատմությունը ցարդ անբավարար է ուսումնասիրված: Հայ գաղթավայրերի պատմության մասին եղած գրականությունից լրիվ պատկերացում չի կարելի կազմել այդ գաղթի հիմնական փուլերի մասին:

Եթե գրականության մեջ հիշատակվում է հայերի գաղթելու առաջին (որը ընդգրկում է X—XIII դարերը), երկրորդ (XIV դ.) և երրորդ (XV դ.) փուլերի մասին, ապա Մոլդավիա և Բեսարաբիա հայերի հետագա գաղթելու վերաբերյալ տեղեկություններ համարյա չկան: Ստացվում է այնպիսի տպավորություն, որ կարծես թե հայերը այլևս Մոլդավիա չէին գաղթում:

Սակայն Գրիգորիոսյուսի հայերի նախնիների (հայտնի է, որ իրենք Գրիգորիոսյուսի հայերը գաղթեցվել էին Մոլդավիայի և Բեսարաբիայի տարբեր քաղաքներից) Մոլդավիայում վերաբնակվելու ժամանակը պարզելու նպատակով մեր պրպտումները հանգեցրին այն եղրակացություն, որ հայ գաղթականների հոսքը դեպի Մոլդավիա չի դադարել ոչ XVII և ոչ էլ XVIII դարերում:

Գրիգորիոսյուսի հայերի նախնիների որտեղից, երբ և ինչ ուղիներով Մոլդավիա և Բեսարաբիա գալու հարցը պարզելուն հետամուտ լինելով՝ մենք հանգեցինք այդպիսի եղրակացության:

Նշված հարցի պարզաբանումը կապված է որոշ դժվարությունների հետ, որոնք առաջին հերթին լսում են այն հանգամանքից, որ չկան ուղղակի վկայություններ Գրիգորիոսյուսի հայերի այն քաղաքներում վերաբնակվելու մասին, որտեղից հետագայում նրանք դուրս եկան: Ուստի, և պատահական չէ, որ հայ պատմագրությունը մինչև այժմ վերջնականապես չի լուծել այդ պրոբլեմը:

Վերը առաջադրված հարցը լուծելու համար հետազոտողը հարկադրված է ինչև ոչ թե ուղղակի, այլ անուղղակի տվյալներից: Նման վկայությունների շարքին են պատկանում այն գերեմանաքարերը, որոնք հայերը, իրենց սովորության համաձայն, տանում էին նոր բնակավայրերը, ինչպես և որոշ այլ աղբյուրներ: Հիշյալ շիրմաքարերը (թվով 24 հատ) գտնվում էին Գրիգորիոսյուսի հայկական երկու եկեղեցու պարիսպներում: Նրանց նկարագրությունը տվել է հայտնի հայադետ Բուշուկ-Իոաննեսյուսը 1896 թվականին: Նա նկարագրել է նաև հայկական եկեղեցիների խորաններում պահվող եկեղեցական հնամենի իրերի հարուստ հավաքածուն²: Այդ հավաքածուի բոշ իրեր, դեռ 1830 թ., նկարագրել է Բժիշկյանն իր ճանապարհորդական նոթերում³: Տապանաբարերը և եկեղեցական իրերը հնարավորություն են ընձևում մեղ ստույգ պատասխան տալ այն հարցին, թե որտեղից, ո՞ր վայրից են Մոլդավիա և Բեսարաբիա գաղթել դրիգորիոսյուսեցիների նախնիները: Պարզվում է, որ հայերը հիմնականում գաղթել են Արևելյան Հայաստանից: Այսպես, 24 տապանագրից 15-ը վկայում են, որ հանդուցյալների նախնիները գաղթել են Հին Նախիջևանից (տապանագիր № 6 և № 7)⁴, Նդվարդ և Տեղ գյուղերից (տապանագիր № 2, № 3, № 4 և № 5)⁵, ինչպես նաև Արևելյան Հայաստանի այլ վայրերից:

¹ Մոլդավիա ասելով, նկատի է առնվում պատմական Մոլդավիան:

² X. И. Кучук-Иоаннесов, Армянские надписи в Григориополе Херсонской губернии, М., 1896.

³ Մի նաև Բժիշկյանն, Ճանապարհորդություն 'ի Լևհաստան և յայլ կողմանո բնակեալ 'ի հայկադանց սերելոց 'ի նախնեաց 'ինի քաղաքին, Վենետիկ, 1830, էջ 164—166:

⁴ Տե՛ս X. И. Кучук-Иоаннесов, Նշված աշխատությունը, էջ 110:

⁵ Նույն տեղում, էջ 8—10:

Ռերենք տապանաբարերից մեկի բովանդակությունը, որը ոչ միայն ստույգ մատնանշում է հայերի բնակավայրը, այլև վերաբնակիչների զբաղմունքի բնույթը.

Այս է տապան հանգստեան
 Եւ 'ի յերկրէն յարեւելեան
 Երկիրս կոչի 'ի Նախաճաւան
 Եւ գեղն կոչի Դուրունիս⁶
 Լուսահոգի Սահակի
 Ռրդի հանգուցեալ Վարդանի
 Գործով քարի վաճառական
 Եւ 'ի կեանս թվին ՌՄԺԵ-ին
 Սեպտեմբերի ԻԱ-ին: (սեպտեմբերի 21, 1766 թ.)⁷

Դրա հետ միասին, քննարկվող վիճագրական նյութը ցույց է տալիս, որ Գրիգորիոսյանի հայերի նախնիները եկել են ոչ միայն Արևելյան, այլև Արևմտյան Հայաստանից և նույնիսկ փոքր Ասիայից: Տապանագրերից մեկը վկայում է.

Այս է տապան հանգստեան
 Գիւղէն Ավանեցի Սարգսի
 Որդի Երոնումի Ասլումի
 Նոր փոխեցաւ առ Քրիստոս թվին ՌՃՅԶ: (1737)⁸

Քուչուկ-Ռոսնենսուվը նշում է, որ Ավան գյուղը գտնվել է Վան քաղաքից հյուսիս և եղել է քաղաքի նավահանգիստը⁹: Վերջապես մյուս տապանագիրը (№ 9) պատմում է այն մասին, որ հանգուցյալի նախնիները փոքր Ասիայի Ամասիա քաղաքից են գաղթել¹⁰: Միջնադարում Ամասիայի հայ աղգարնակչության ստվարության մասին վկայում են Սիմեոն Դպիր Լեհացու տվյալները, որը, այցելելով Ամասիա մոտավորապես 1613 թ., նշում է, որ քաղաքում թվայր երեք եկեղեցի Հայոց և ԲՃ տուն հայի՝ Եկաց եւ բնակացս¹¹:

Տապանագրերի վկայությունները հաստատվում են Գրիգորիոսյանի եկեղեցական որոշ իրերի վրա եղած մակագրություններով: Ոչնչացնա, եպիսկոպոսական խույրը, որ գրիգորիոսյանցիները բերել էին Ռզմաիից, վկայում է, որ Ռզմաիի հայերի մի մասը Փոքր Ասիայից (Թոխաթից)¹² ևն վերաբնակվել: Հայերի մյուս մասը, որ բնակություն էր հաստատել Կիլիկիայում և Կառւշանում, Արևմտյան Հայաստանից և Փոքր Ասիայից էր գաղթել: այդ երևում է շենչակի և վարագույրի ասեղնագրերից (գաղթել են Տրապիզոնից¹³, Տիվրիկից և Թոխաթից¹⁴): Վարագույրի ասեղնագրից պարզվում է նաև մի այլ ուղադրավ հարց. «Այսպիսով նա,— կարգում ենք բնագրում,— կատարված է Թոխաթ քաղաքում հայոց թվագրության 1207 (1751) թ.»¹⁵: Այն փաստը, որ վարագույրը պատվիրվել է Թոխաթում, վկայում է, որ հայերը (մասնավորապես Կիլիկիացիները) հաստատվելով նոր բնակավայրերում, չէին կորցնում կենդանի կապը իրենց հայրենիքի հետ:

Այսպիսով, պարզվում է, որ այն քաղաքները, որոնցից XVIII դարի վերջին հայերը տեղափոխվել էին Գրիգորիոսյանի, իրենց հերթին բնակեցված են եղել Արևելյան Հայաստանից (Հին Նախիջևան, Նղվարդ, Տեղ, Դուրունիս և այլն), Արևմտյան Հայաստանից (Տրապիզոն, Տիվրիկ, Ավանց) և Փոքր Ասիայից (Ամասիա և Թոխաթ) եկած հայերով: Ուսկայն աստատելով այդ, մենք

⁶ Դուրունիսը Ագուլիսի մոտ գտնվող Տրոնիս գյուղն է:

⁷ X. И. Кучук-Иоаннесов, նշված աշխ., էջ 10:

⁸ Նույն տեղում, էջ 13:

⁹ Վանի նավահանգիստը եղել է ոչ թե Ավանը, այլ Ավանց գյուղը:

¹⁰ X. И. Кучук-Иоаннесов, նշված աշխ., էջ 11:

¹¹ Սիմեոն Դպիր Լեհացի, Ուղեգրություն: Վանդէս ամսօրեայք, 1934, էջ 154:

¹² X. Кучук-Иоаннесов, նշված աշխ., էջ 5:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում, էջ 6:

¹⁵ Նույն տեղում:

պարզեցին խնդրի միայն առաջին մասը: Անհրաժեշտ է պարզաբանել նաև խնդրի երկրորդ մասը, այն է՝ երբ, ինչ ժամանակ են Գրիգորիոսյան հայերի նախնիները գաղթել Մուղավիա և Բեսարաբիա: Հայտնի է, որ դեռ հին ժամանակներից ի վեր հայ գաղթականները բնակություն էին հաստատում Մուղավիայում և Բեսարաբիայում: «Մասեաց Աղավնի» հանդեսում 1857 թ. հրապարակված մուղավացի մի հեղինակի աշխատություններից մեկում մենք կարդում ենք.

«1064 ին պարսիկք Հայաստանի Անի մայրաքաղաքը պաշարելով, քսնի մը ընտանիք ի Մուղավիա եւ ի Լեհաստան եկան»¹⁶: Միզ անհատ հեղինակը դրանով իսկ միանգամայն պարզորոշ կերպով նշում է, որ Մուղավիայում հայերը բնակություն են հաստատել դեռևս XI դ.: Այս կարծիքին համերաշխում են նեյգեբսուները և Լևոն Բաբայանը¹⁷: Նման եզրակացության է հանգում նաև Լ. Մ. Մելիքսեթ-բեկը. «Հայերի գաղթը Ղրիմ, Մուղավիա և Լեհաստան,— գրում է նա,— տեղի է ունեցել XI դարում»¹⁸: Ինչ վերաբերում է Բեսարաբիային և մասնավորապես Աքերմանին, սպա, Լ. Մ. Մելիքսեթ-Բեկի վկայության համաձայն, հայերը առաջին անգամ այնտեղ երևացել են X դարում¹⁹, այսինքն ավելի վաղ, քան Մուղավիայում:

Առաջին գաղթականներից հետո Մուղավիայում բնակություն են հաստատել հայ վերաբնակիչների մի քանի խոշոր քաղաքականներ: Այդ տեղի է ունեցել, ինչպես վկայում են հայկական, մուղավական և ռումինական աղբյուրները, 1342, 1418, 1475 և 1606 թվականներին²⁰: Այդ քաղաքականների մեծության մասին գաղափար կարելի է կազմել թեկուզ այն փաստից, որ 1418 թ. մոտ երեք հազար հայկական ընտանիքներ բնակություն հաստատեցին Մուղավիայի յոթ քաղաքներում²¹: XV դարից սկսվում է այնպիսի քաղաքների ծաղկումը, որպիսիք են՝ Սուլավան, Սերեթը, Զերնովիցին, Յասսին, Բոստոշանը, ուր հիմնականում տեղաբնակված էր հայ ազգաբնակչությունը: Մուղավական իշխանները մեծ արտոնություններ էին շնորհում հայ վաճառականներին: Դեռ ավելին, նրանք հայ վաճառականներին այլ վայրերից հրավիրում էին իրենց երկիրը: Այսպես, օրինակ, Ալեքսանդր Բարի (1400—1432) և Ստեֆան Մեծ (1457—1504) իշխանները առևտուրը երկրում ուժեղացնելու համար Մուղավիա են հրավիրել հայ վաճառականներին²²: Այդ կապակցությամբ հետաքրքրական է նշել, որ մուղավահայերը դեռևս XV դարում առևտրական ուղիներ են հարթել դեպի հարավային Ռուսաստան, այսինքն՝ մոտավորապես դեպի այն վայրը, որտեղ XVIII դարի վերջին ծնունդ առան հայերի ընդարձակ բնակատեղիներ: Մուղավահայերի մասին իր ուսումնասիրության մեջ Լևոն Բաբայանը գրում է. «Թաթարների երկիրը (հարավային Ռուսաստան) կարելի էր Սուլավայից հասնել նաղ և Աքերման քաղաքներով»²³:

Մուղավիայի և Բեսարաբիայի հայկական գաղթավայրերի պատմությունը քննարկելիս չի կարելի ուշադրություն չդարձնել այն պարագային, որ հայ վերաբնակիչները առավելապես ձգտում էին բնակվել քաղաքներում: Դրա հետևանքով հայ գաղթավայրերի աշխարհագրական տեղաբաշխումը փոքր-ինչ ընդարձակվում է: Այդ իսկ պատճառով Մուղավիայի և Բեսարաբիայի խոշոր կենտրոններում՝ Սուլավայում և Աքերմանում բնակվելուց զատ, հայերը բնակություն են հաստատել նաև այլ քաղաքներում: Հայտնի է, որ Ստեֆան Մեծի ղորքերում շատ հայեր կային: Ռումինական պատմաբան-բանասեր Բընըցեանուն այդ բացատրում է Մուղավիայի քաղաքների հայ ազգաբնակչության թվի մեծությամբ, քանի որ սովորաբար իշխանները իրենց

¹⁶ «Համառոտ տեղեկություն մուղավիոյ հայկազանց վրայ», «Մասեաց աղավնի», 1857, էջ 100:

¹⁷ Տե՛ս Լևոն Բաբայան, Հայերը Մուղավիայում և Բուքովինիայում, Թիֆլիս, 1911, էջ 37—38:

¹⁸ Л. М. Меликсет-Беков, Армянские древности в Аккермане (в Бессарабии), Тифлис, 1911, էջ 6:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 5:

²⁰ «Մուղտ-Վալաքիայի մեջ գտնվող հայերը», «Համբավաբեր Ռուսիո», 1864, № 64:

²¹ Լևոն Բաբայան, նշված աշխ., էջ 41:

²² Նույն տեղում, էջ 40:

²³ Նույն տեղում, էջ 47:

գործը հավաքագրում էին քաղաքների բնակչությունից²⁴։ Պարզվում է, որ արդեն միջին դարերում Իզմաիլ, Կիլիա, Կաուշան և Բենդեր քաղաքներում կային հայկական գաղութներ։ Բժիշկյանի ուղեգրություններից նույնպես կարելի է նման եզրահանգում անել²⁵։ Ավելի որոշակի է խոսում այդ մասին իտալացի գիտնական Դոնադո դե Լեդենը։ Նրա տեղեկությունների համաձայն, մինչև 1484 թ., այսինքն՝ մինչև Բուրքիայի կողմից Կիլիայի և Աքերմանի գրավումը հիշյալ քաղաքների հիմնական բնակչությունը հայեր էին²⁶։

Մուղավիայի քաղաքների հայ բնակչությունը աչքի էր զարնվում ոչ միայն իր մեծաքանակությամբ, այլև տոհմիկությամբ։

Երբեմն հայերի ներկայացուցիչներին տեսնում ենք պետական բարձր պաշտոններում։ Բընըցեանուի հավաստմամբ, Ղրիմից գաղթած Գոյան ազգանունով մի հայ, որը Ստեֆան Մեծի օրոք ազնվականի կոչում էր ստացել, 1468-ից մինչև 1470 թ. գրավել է Կիլիայի ամրոցի պարետի բարձր պաշտոնը²⁷։

Ֆրանսիական դեսպան Ժիլբերտ դե Լաննուայի հուշադրային վկայությունների համաձայն հայկական մեծաքանակ գաղութ է եղել նաև Աքերմանում։ 1421 թ., նշում է նա, Աքերմանում արդեն կար հայկական գաղութ և եկեղեցի²⁸։ Ֆրանսիական դեսպանի վկայությունը կասկածի տեղիք չի տալիս, բանի որ այն հաստատվում է հայկական հավաստի աղբյուրներով։ «Նոր նյութեր Կիևի հայկական հին գաղութի մասին» իր հոդվածում Լ. Ս. Խաչիկյանը, կովան ունենալով XV դարի հայկական հիշատակարանները, նշում է, որ «1459—1460 թթ. Աքերմանում առանձին թեմ կար։ Այնտեղ նստող հայ եպիսկոպոս Նիկողայոսին էին ենթարկվում «Ստեֆան Վոյնվոդի իշխանության տերիտորիայում, այսինքն Մուղավիայում բնակվող հայերը»²⁹։

Ամփոփելով վերը բերված տվյալները, մենք հանգում ենք այն եզրակացության, որ սկսած X—XI դարերից Մուղավիայի և Բեսարաբիայի տերիտորիաներում գաղթականների մեծ խմբեր գալու շնորհիվ առաջացան հայկական բնակավայրեր։ Հայ գաղթօջախներ ստեղծվեցին հիմնականում քաղաքներում, մասնավորապես, Մուղավայում, Աքերմանում, Կիլիայում, Սերեթում, Կաուշանում։ Պետք է կարծել, որ Մուղավիայի և Բեսարաբիայի հայկական գաղութները իրենց ծաղկման են հասել XV—XVI դարերում։ Սակայն մենք դեռ չենք պարզել Գրիգորիոպոլսի հայերի նախնիների Բեսարաբիայում և Մուղավիայում բնակություն հաստատելու ժամանակը։ Այդ կապակցությամբ հարց է ծագում, արդյո՞ք նրանք XI—XV դարերում Մուղավիա և Բեսարաբիա եկած հայ գաղթականների մի մասը չէին կազմում, կամ թե Գրիգորիոպոլսի հայերի նախնիները ավելի ուշ են բնակություն հաստատել Աքերմանում, Կիլիայում, Իզմաիլում և Կաուշանում, քան իրենց ազգակիցները։

Առաջադրված հարցերին պատասխանելու համար վերստին հարկ կլինի դիմել տապանաբարների օգնությանը։

Քուլուկ-Իոաննեսովը, որը նկարագրել է տապանաքարերը, գտել է հանգուցյալների նախնիների գաղթելու ժամանակը որոշելու սրամիտ և հուսալի մի եղանակ։ №№ 6, 7 և 8 տապանագրերը վերլուծելիս (№ 8 տապանագրերում, օրինակ, մահվան տարեթիվն է 1770 թվական, իսկ նախնիների ծննդավայրը՝ հին Նախիչևանը) Քուլուկ-Իոաննեսովը գալիս է հետևյալ եզրակացության. «№№ 6, 7 և 8 տապանագրերում հիշատակված անձինք այստեղ են գաղթել նրանի նահանգից, հավանաբար, XVIII դարի սկզբին, հակառակ դեպքում Երրորդ կամ չորրորդ սերնդից

24 Տե՛ս Վ. Բընըցեանու, Հայկական ծագում ունեցող բարձրաստիճան պաշտոնյաները հին Մուղավիայում, «Բանբեր Մասինադարանի», Նրևան, 1962, № 6, էջ 271։

25 Տե՛ս Մ. Բժիշկյան, Նշված աշխ., էջ 181, 216, 217։

26 Դոնադո դե Լեդենի տեղեկությունների մասին հեղինակին հաղորդել է Սուրեն Քոլանջյանը։

27 Տե՛ս Վ. Բընըցեանու, Նշվ. աշխ., էջ 274։

28 Տե՛ս «Записки Одесского общества истории древностей», т. III, 1853, էջ 438; Я. Р. Дашкевич, Армянские колонии на Украине в источниках и литературе XV—XIX веков, Ереван, 1962, стр. 15.

29 «Исторические связи и дружба украинского и армянского народов», Ереван, 1961, էջ 117։

հետո վաղուց մոռացված կլինեին նրանց հարազատ գյուղերի անունները, ինչպես այդ սովորաբար միշտ տեղի է ունենում³⁰։

Այս գիտությունից այն կողմի հեղինակը չի անցնում, որը միանգամայն հասկանալի է, քանի որ նրա առջև չէին ծառացած մեզ հետաքրքրող խնդիրները։ Իսկ մենք օգտվելով Քուչուկ-Րոանենսովի եղանակից, կարող ենք լուծել առաջադրած խնդիրը։ Բավական է որպես ելակետ ընդունել երկու գործոն. մահվան տարեթիվը և հանգուցյալի նախնիների ծննդավայրի ստույգ անվանումները։ Նշելով այդ տվյալներից, Գրիգորիոպոլսում ելած տապանազրերը կարելի է երեք խմբի բաժանել։ Առաջին խմբի մեջ կդասվեն այն տապանազրերը, որոնք բավարարում են վերը նշված պահանջներին։ Երկրորդ խմբի մեջ կմտնեն այն տապանազրերը, որոնք ցարդ չեն վերածանված և, վերջապես, երրորդ խմբի արձանագրությունները լրիվ չեն, այսինքն, բացակայում են այն վայրերի անունները, որտեղից գաղթել են այդ հայերը։

Վերլուծենք առաջին խումբը։ Լեյն ընդգրկում է տասը շիրմաքար (№ 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 14, 15 տապանազրեր)։ Այստեղ հիշատակված անձինք հիմնականում Արևելյան Հայաստանից են գաղթել (բացառությամբ № 9 և № 15 տապանազրերից)։ Նթե առաջին խմբի տապանազրերը վերախմբավորենք՝ ելնելով մահվան նշված տարեթվերից, ապա այդ տապանազրերը կարելի է բաժանել երկու ենթախմբի։ Առաջին ենթախմբի մեջ կմտնեն այն անձանց տապանազրերը, որոնք վախճանվել են XVIII դարի առաջին կեսին. տապանագիր № 2՝ 1713 թ., № 3՝ 1719 թ., № 4՝ 1713 թ., № 6՝ 1741, № 15՝ 1737։ Երկրորդ ենթախմբում ընդգրկված անձինք մահացել են XVIII դարի երկրորդ կեսին, այսինքն Գրիգորիոպոլսում վերաբնակվելուց փոքր-ինչ առաջ։ Այդ տապանազրերն են՝ № 5՝ 1766 թ., № 7՝ 1766, № 8՝ 1770 թ., № 9՝ 1783 թ., № 14՝ 1761 թ.։

Խորամուխ լինելով առանձին տապանազրերի բովանդակության մեջ, կարելի է եզրակացնել, որ դրանց մեջ հիշատակված անձինք միաժամանակ կամ գրեթե միաժամանակ են գաղթել միևնույն վայրից (օրինակ. տապանագիր № 2, 3, 4)։ Հետևաբար, առաջին ենթախմբի տվյալների վերլուծությունը Քուչուկ-Րոանենսովի եղանակով³¹ բերում է մեզ այն համոզման, որ Գրիգորիոպոլսի հայերի նախնիների մի մասը թողել է իր հայրենիքը և եկել Մուղավիա և Բեսարաբիա, մասնավորապես, XVII դարի կեսերին։ Դա հայ գաղթականների հոսանքներից մեկն էր։ Առաջին գաղթականության ակունքները գտնվում են Արևելյան Հայաստանում, իսկ երկրորդինը՝ Արևմտյան Հայաստանում և փոքր Ասիայում։

Երկրորդ ենթախմբի տվյալների վերլուծությունը մեզ հուշում է, որ եղել է նաև հայ գաղթականների երկրորդ թափորը, որը Մուղավիա և Բեսարաբիա է եկել XVIII դ. հենց սկզբին։ Վերջին եզրակացության օգտին է խոսում նաև հետևյալ փաստը. նկարագրելով իր այցելությունը Կիլիա, Բժիշկյանը իր էանապարհորդական նոթերում գրում է. «Տևալ ի յայսմաուրս յիշատակարան, որ ասէ գրեալ ի Պաղճսարայ ի ՌՃԾԱ. (1702 թ.—Ժ. Ա.) և եղեալ ի քաղաքն Քիլի ի դրունս սուրբ Աւթածնին»³²։ Այսինքն, այլ կերպ ասած, այդ գիրքը Կիլիա են բերել Ղրիմից Մուղավիա գաղթած հայերը XVIII դարի սկզբին։ Մի այլ փաստ հաստատում է մեր առաջին եզրակացությունը։ Գրիգորիոպոլսեցիների եկեղեցական իրերի մեջ կար 1668 թ. վերաբերող մի խույր³³։

Հավանական է, որ այդ խույրը պատկանել է XVII դարում Կիլիա գաղթած հայերին, քանի որ այն պահվում էր սուրբ Աստվածածնի եկեղեցում, որը կառուցվել էր Գրիգորիոպոլսում ի հիշատակ Կիլիայի նույնանուն եկեղեցու։

Ամփոփելով տապանազրերի առաջին խմբի վերլուծությունը, մենք հանգում ենք հետևյալ եզրակացության. Գրիգորիոպոլսի հայերի նախնիները Մուղավիա և Բեսարաբիա են գաղթել մի քանի (հիմնականում երկու) թափորով։ Այդ գաղթը տեղի է ունեցել XVII դարի կեսից մինչև XVIII դարի սկիզբը ընդգրկող ժամանակաշրջանում։ Սրանք միայն նախնական եզրակացություններ են։ Ավելի լրիվ և վերջնական եզրակացությունների համար անհրաժեշտ է վերլուծել նաև տապանազրերի երկրորդ և երրորդ խմբերը։ Շիրմաքարերի երկրորդ խումբը պարունակում է շորս տապանագիր (№ 10, 11, 12, 13) և ունի որոշ առանձնահատկություն, այն է՝ ցարդ չի պար-

³⁰ X. И. Кучук-Иоаннесов, *Նշված աշխ.*, էջ 11։

³¹ Ընդունելով, որ հարազատ վայրերի անունները գաղթականները մոռանում են իրենք-շորս սերունդ անց, այսինքն՝ մոտավորապես 90—120 տարի հետո։

³² Մ. Բժիշկյան, *Նշվ. աշխ.*, էջ 216։

³³ Տե՛ս X. И. Кучук-Иоаннесов, *Նշվ. աշխ.*, էջ 5—6։

զարանված այն գյուղերի ստույգ անվանումները, որտեղից գաղթել են տապանագրերում հիշատակված անձինք: № 10 տապանագրում նշված անձը ծագումով «Արևելքից էր, Թարքամար գյուղից, Մահվան տարեթիվը 1724 թվականն է»³⁴, № 11 տապանագիրը վկայում է, որ հանգուցյալը եղել է վաճառական, արևելքի՝ Թարքամար գյուղից: Մահվան տարեթիվն է 1721 թ.³⁵, № 12 տապանագիրը ցույց է տալիս, որ հիշատակվող անձը Թաքայմար գյուղից էր: Մահվան տարեթիվը 1726 թվականն է³⁶, Վերչապես, № 13 տապանագրում նշված է, որ հանգուցյալի նախնիները գաղթել են Թրիմար գյուղից, իսկ Մահվան տարեթիվը 1728 թվականն է³⁷:

Այսպիսով, մենք ունենք հետևյալ շորս անվանումները. 1. Թարքամար, 2. Թարքամար, 3. Թաքայմար, 4. Թրիմար: Թվում է, թե պարզ է, որ այդ բոլոր անվանումներն էլ միևնույն գյուղի անվան աղավաղումներն են: Նման եզրակացություն հանգելու համար հատուկ խորաթափանցություն չի պահանջվում:

Բայց Քուլուկ-Իրանենսովը Հայաստանում փնտրում է Թարքամար անվամբ գյուղ. «Սակայն Հայաստանի որ մասում է գտնվում այդ գյուղը,— գրում է նա,— դժվար է ասել»³⁸:

Քուլուկ-Իրանենսովը զուր է որոնել Թարքամար անունով գյուղ, քանի որ ոչ Արևելյան և ոչ էլ Արևմտյան Հայաստանում այդպիսի գյուղ չկա: Հետևաբար, վերստին հարց է ծագում, հատկապես որ գյուղի անվան աղավաղումն են հանդիսանում վերը բերված անվանումները:

Վերլուծելով բոլոր տապանագրերը, չի կարելի ուշադրություն չդարձնել մի էական հանգամանքի վրա: Տապանագրերից մեզ արդեն քաջ հայտնի է, որ նրանց մեջ հիշատակված անձինք գաղթել են Արևելյան Հայաստանից, նշվում է, որ նրանք արևելքից են (տապանագիր № 6, 7, 8)³⁹:

Արևմտյան Հայաստանից (տապանագիր № 15)⁴⁰ կամ Փոքր Ասիայից (տապանագիր № 9)⁴¹ եկած անձանց հիշատակող տապանագրերում ոչինչ առանձնապես չի ընդգծվում: Հետևաբար, ամենևին էլ իրավացի չէ Քուլուկ-Իրանենսովը, երբ վերլուծելով միմյան մեկ տապանագիր (№ 6) և չհամարելով այն մյուս տապանագրերի հետ, ամփոփում է հետևյալ կերպ: «Արևելքի արտահայտությունը վերլուծվող տապանագրերում վկայում է Հայաստանից կամ փոքր Ասիայից գաղթած լինելը»⁴², մեր վերլուծությունից պարզվում է, որ այդ արտահայտությունը ընդգծում է միայն Արևելյան Հայաստանից գաղթած լինելու հանգամանքը:

Անդրադառնալով մեր կողմից վերլուծվող տապանագրերի երկրորդ խմբին, նկատում ենք: յրանցում «արևելքի»⁴³ արտահայտությունը: Հետևաբար պարզվում է, որ փնտրած գյուղը (Թարքամար, Թաքայմար կամ Թրիմար) պետք է գտնվի Արևելյան Հայաստանում: Այդ կապակցությամբ, ակադեմիկոս Ս. Տ. Նրեմյանը հայտնել է այն կարծիքը, որ վերը նշված գյուղի անվանումը, ամենայն հավանականությամբ, Սյունյաց աշխարհի որևէ գյուղի անվան աղավաղումն է: Ստեփանոս Օրբելիանը իր «Պատմություն Սիսական նահանգի» աշխատության մեջ հիշատակում է երկու գյուղերի անվանում, որոնք խիստ համահունչ են Թարքամար կամ Թաքայմար անվանումների հետ: Դրանք են Տաքամարը⁴⁴ կամ Թաքամարին⁴⁵:

Բոլոր այդ տապանագրերի հանգամանալից համադրումը բերում է այն եզրակացության, որ երկրորդ խմբի արձանագրություններում նշված գյուղի անունը, ամենայն հավանականությամբ, Սյունյաց գավառի Թաքամարի գյուղի անվան աղավաղումն է:

Հետևաբար, դրա շնորհիվ մենք պարզաբանեցինք, որ շիրմաքարերի երկրորդ խմբի տապանագրերում հիշատակվող գյուղի անվանումը աղավաղված է: Վերջին հանգամանքը մեզ իրա-

34 X. II. Кучук-Иоаннесов, *Նշվ. աշխ.*, էջ 11:

35 Նույն տեղում:

36 Նույն տեղում, էջ 12:

37 Նույն տեղում:

38 Նույն տեղում:

39 Նույն տեղում, էջ 10:

40 Նույն տեղում, էջ 13:

41 Նույն տեղում, էջ 11:

42 Նույն տեղում, էջ 10:

43 Նույն տեղում, էջ 11, 12:

44 Ստ. Օրբելիան, Պատմություն նահանգի Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 518:

45 Նույն տեղում, էջ 521:

վունք է ընձեռում ենթադրելու, որ երկրորդ խմբի տապանազրեբում հիշատակված անձանց նախնիները (վերհիշենք մահվան տարեթիվերը՝ 1724, 1727, 1726, 1728) գաղթել են և եկել Մուղղավի և Բեսարաբիա XVII դարի սկզբից ոչ ուշ, քանի որ նրանց սերունդներն արդեն սկսել էին մոռանալ իրենց պապերի հայրենիքը, որի հետևանքն է հենց հարազատ գյուղերի անվանումների աղավաղման մեր նշած փաստերը:

Շիրմաքարերի երրորդ խմբի տապանազրեբի տվյալները (№ 19, մահվան տարեթիվը՝ 1740 թ., № 20, մահվան տարեթիվը՝ 1749, № 21, մահվան տարեթիվը՝ 1749, № 22, մահվան տարեթիվը՝ 1749, № 23, մահվան տարեթիվը՝ 1726, № 24, մահվան տարեթիվը՝ 1727 թվական)⁴⁶, որոնցում լրիվ բացակայում է այն վայրերի անվանումը, որտեղից գաղթել են Գրիգորիոպոլսի հայերի նախնիները, վկայում են, որ այդ հայերի հարազատ գյուղերի և շենքերի անվանումները արդեն մոռացվել էին: Հետևաբար, տապանազրեբի երրորդ խմբի բովանդակությունը հաստատում է մեր հիմնական եզրահանգումը: Հայերի գաղթը Մուղղավի և Բեսարաբիա շարունակվել է ողջ XVII դարի ընթացքում:

Պարզելով այս վերջին պարագան, մեզ մնում է գտնել, թե ի՞նչ ուղիներով և ո՞ր երկրներով էին հայերը գնում Մուղղավի և Բեսարաբիա: Ռուսիայի պատմաբան Յորգայի վկայությամբ, «Հարավ-արևելյան եվրոպայի բոլոր հայերը Կաֆայից են եկել»⁴⁷: Հայ գաղթականների քարավանները սկսել էին եվրոպա դալ, ինչպես վերը նշվեց, արդեն XI դարից, ավելի ճիշտ Բագրատունիների մայրաքաղաք Անիի անկումից հետո, և սկսած այդ ժամանակվանից, հայ գաղթականների նորանոր թափուրներ էին գալիս եվրոպա, մասնավորապես, Ռուսաստան, Լեհաստան, Մուղղավի և Ռումինիա:

Ինչպես նշում է Լևոն Բաբայանը, «Հարավային Ռուսաստան և Սև ծովի եվրոպական ափերը գաղթած հայերի մեծամասնությունը միառժամանակ խմբվեց Ղրիմի լեռնակղզում, մանավանդ նրա Կաֆա (Քէոդոսիա) քաղաքում»⁴⁸:

Այսպիսով, պարզվում է, որ հայ գաղթականների թափուրները այդ ժամանակաշրջանում Մուղղավի, Բեսարաբիա և Լեհաստան էին գնում Ղրիմով: Ամենայն հավանականությամբ, հայերն այդ ուղին վաղուց էին հարթել, քանի որ Սիմեոն Դպիրը իր «Ճանապարհորդական նորերում» խոսելով լեհահայերի մասին, ընդգծում է. «Ու ասին թէ յԱնիու եկած են տեղացս Հայք. եւ զի ըստ պատմագրաց երկու բաժին իղեալ է՝ մինն եկեալ ի Քաֆայ եւ Ախքերման»⁴⁹:

Լեհ արվեստագետ-պատմաբան Սանկովսկու տվյալները վկայում են, որ սկսած XV դարից այդ ուղին հայերի համար տրորված ճամփա է դառնում:

Մանկովսկին իր «Արևելքը լեհական պեղարվեստական մշակույթի մեջ» մենագրության մեջ գրում է, որ XV դարի վերջերից Դանուբին հարող երկրների ճարտարապետության վրա զգացվում է հայկական ճարտարապետության շեշտված ազդեցությունը⁵⁰, եվ այդ ազդեցությունը ներթափանցում է Ղրիմից: «Հայ շինարարները և քարտաշները, — շարունակում է Մանկովսկին, — եկել են (Մուղղավիա.—Ժ. Ա.) կամ անմիջականորեն Ղրիմի ճենովական գաղութներից, որտեղ նրանք մինչև թուրքերի կողմից Կաֆայի 1475 թ. գրավումը ծավալել էին բուռն շինարարական գործունեություն, կամ Էվոփից, որտեղ նրանք աշխատանք էին գտնում տեղի բազմադամ և հարուստ հայկական գաղութում»⁵¹:

Ելնելով շարադրվածից, կարելի է վստահորեն ասել, որ Մուղղավի և Բեսարաբիա գնացող հայ գաղթականների հետագա սերունդները նույնպես հիմնականում անցնում էին Ղրիմով: Հետևաբար, Գրիգորիոպոլսի հայերի նախնիները եւ XVII դարում թողնելով իրենց հայրենիքը և գաղթելով Մուղղավի և Բեսարաբիա, նույնպես պետք է գնային Ղրիմով անցնող այդ, արդեն քաջածանոթ, ճանապարհով: Վերջին այս հանգամանքը հաստատվում է նաև աղբյուրների տվյալներով: Բժիշկյանի վերը բերված աշխատությունից մենք իմացանք, որ հայ գաղթականների կիրիա բերած եկեղեցական գրքերից մեկը գրվել է Բախշիսարայում⁵²:

⁴⁶ Տե՛ս X. И. Кучук-Иоаннесов, «Դժ. աշխ., էջ 16:

⁴⁷ Քաղվածքը բերվում է Տ. Մանկովսկու «Արևելքը լեհական պեղարվեստական մշակույթի մեջ» գրքից (Լեհերեն), Վրոցլավ—Կրակով, 1959, էջ 34:

⁴⁸ Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 13:

⁴⁹ Սիմեոն Դպիր Լեհացի, նշվ. աշխ., «Հանդէս ամսօրեայ», 1935, էջ 169:

⁵⁰ Տ. Մանկովսկի, նշվ. աշխ., էջ 225:

⁵¹ Նույն սեղում:

⁵² Տե՛ս 32-րդ ծանոթագրության քաղվածքը:

Միանգամայն բնական է, որ հայ պանդուխտների ճանապարհը երկար էր և բաժանվում էր մի քանի հատվածի: Որոշ ժամանակ հանգստանալու համար նրանք կարող էին մի որևէ տեղ կիսաճանապարհին կանգ առնել: Այդպիսի հանգրվանի համար հաճախ Ղրիմն էր նախընտրվում, քանի որ հայ պանդուխտները հուսով էին օթևան գտնել Ղրիմում բնակվող իրենց արյունակիցների մոտ: Հետևաբար, միանգամայն հնարավոր է, որ Ղրիմում լինելու ժամանակ պանդուխտներից որևէ մեկը Բախչիսարայում պատվիրած լինի իրեն պետքական այդ գիրքը:

Աչքի անցկացնելով հայերին իրենց հեռավոր հայրենիքից Մոլդավիա և Բեսարաբիա բերած գաղթականական արահետները, անհրաժեշտ է ընդգծել, որ Ղրիմով անցնող ուղին միակը չէր նրանց համար: Արևմտյան Հայաստանից և Փոքր Ասիայից գաղթածները Մոլդավիա և Բեսարաբիա են մեկնել նաև այլ համփաներով:

Այժմ, երբ մեղ համար պարզ դարձավ, թե որտեղից, ե՞րբ և ի՞նչ ուղիներով էին գաղթում Գրիգորիոպոլսի հայերի նախնիները Մոլդավիա և Բեսարաբիա, կարելի է նշել այն գերը, որ նրանք ունեցան XVII դարում Մոլդավիայի և Բեսարաբիայի հայկական գաղթօջախների համար:

Եկվոր հայերը եղան այն կենարար ուժը, որը թարմացրեց և համալրեց հայկական հինավուրց լեռնավայրերը: Հասկանալի է, որ չպետք է կարծել, որ XVII դ. գալով Մոլդավիա և Բեսարաբիա, Գրիգորիոպոլսի հայերի նախնիները կազմեցին առանձնակի համայնք: Ընդհակառակը, նրանք ձուլվելով հին բնակիչների հետ, իրենց հետ բերին կենսատու նոր զարկեր, դրանով իսկ նպաստեցին Մոլդավիայի և Բեսարաբիայի հայկական գաղութների տեական գոյությանը: Եթե դրա հետ միասին հաշվի առնենք նաև այն պարագան, որ XVII դարում (բացառությամբ դարամիջի կարճատև ժամանակամիջոցի) մոլդավական քաղաքների առավել խոշոր հայկական գաղութները այս կամ այն պատճառներով սկսում են նոսրանալ⁵³, ապա եկվոր հայկական տարրի դերը այդ առումով ավելի է մեծանում:

Համեմատաբար կարճ ժամանակում ընտելանալով նոր երկրին և կյանքի նոր պայմաններին, Մոլդավիայի և Բեսարաբիայի հայերը ձեռնամուխ եղան ստեղծարար գործունեության: Սակայն նրանց այնքան էլ երկար չվճռակվեց բնակվել այդ վայրերում: Նրանց մեծ մասի տեղափոխումը Դնեստրի ձախ ափը XVIII դարի վերջին նոր էջ բացեց մոլդավահայերի կյանքում:

Ж. А. АНАНЯН

К ИСТОРИИ ПЕРЕСЕЛЕНИЯ АРМЯН В МОЛДАВИЮ И БЕССАРАБИЮ

Р е з ю м е

Древняя Молдавия была одной из тех стран, куда в средневековье стали стекаться многочисленные потоки армянских беженцев. Известны два основных потока переселенцев — в XIV и XV веках. Приток армянского населения в Молдавию не прекращался и в дальнейшем.

История переселения армян в Молдавию и Бессарабию до сих пор исследована недостаточно. Имеющаяся по истории армянских колоний литература не дает полного представления об основных этапах этого переселения. Если в литературе имеются упоминания о первом (он охватывает период с X по XIV вв.), втором (XIV в.) и третьем (XV в.) этапах переселения армян, то сведений о дальнейших потоках армян в Молдавию и Бессарабию почти не имеется. Создается впечатление, что приток армян в Молдавию прекращается. Однако поиски автора сообщения с целью выяснения времени прибытия предков григориопольских армян (известно, что сами григориопольцы были переселены из различных городов Молдавии и Бессарабии) в Молдавию привели к заключению, что поток армянских переселенцев не прекращался ни в XVII, ни в XVIII

⁵³ Հ Ա Ն Ն Բ ա ր ա յ ա ն, նշվ. աշխ., էջ 81:

веках. Такой вывод делается, в частности, на основании анализа лапидарных надписей могильных плит, хранившихся в оградах двух армянских церквей города Григориополя и описанных в 1896 году Х. И. Кучук-Иоаннесовым. В результате анализа лапидарных надписей выясняется также, что в конце XVII и начале XVIII столетий Молдавия была заселена в основном выходцами из Восточной Армении, хотя имеются свидетельства и о том, что туда прибывали беженцы и из Западной Армении. Наконец, выясняется, что переселенческие тропы, приведшие армян из своей далекой родины в Молдавию и Бессарабию, проходили через Крым. Однако дорога через Крым не являлась для них единственной. Выходцы из Западной Армении и Малой Азии шли в Молдавию и Бессарабию и другими путями.